

ԵՂԻՉԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐՅԱՆ

(Հուշեր և նորեր)



իտեհ, թե Դուրյան ընտանիքը չէմ մոր (Ազնիվ՝ դուստր Հայրապետ Սիլվաչյանի) կողմէ մոտեկ ազգականներ են և մայրս ինձ հՀավաստեր, թե իր ամուսնության առաջին տարիներուն՝ Կոստանդնուպոլսու ասիական արվարձաններեն Սկյուտարի (Ռսկիքաղաք) մեր Պաղար Պաշը լուսավոր տան լայն պատուհաններեն՝ պատանին Պետրոս Դուրյան, Վարդան Լոփթյանի հետ¹, խորին զմայլմամբ կդիտե և շուրջ շուրջի գեղատեսիլ լայն հորիզոն համայնապատճերը, այն դյուքտական կիսաբոլորակը, որ իր մեջ, ձախին գեպի աջ, կարգավ կրովանդակի զույգ սարերը ծաղկափթիթ Զամլընաներուն, կապտագեղ Գալըշ Տաղըն անվանի իր շուրջով, Գորուն՝ Հայուսր-փաշա տանող անստառը, Գատը գյուղը (Քաղկեդոն) և Մարմարայի բացերը հանգչող կղզիները, մանավանդ Հալքին և Բրինքիրուն, ուր Օվիզիոս լատին բանաստեղծը աքսորվեր է եղեր հին ատեն: Ես դեռ աշխարհ եկած չեմ եղեր, և տարիներ վերջ միայն մեր տան լայն լուսավոր պատուհաններեն ակնապիշ և անհագուրդ դիտած եմ նույն շքեղ անմոռանալի համայնապատճերը:

Խելահաս պատանությանս շրջանին, երբ արժեն իսկ այնքան մոլիուանդ զրասիր մընէի ևս ինքս ալ, մի քանի անգամ առիթը ունեցած եմ ունկնդիրուու Սկյուտարի Ս. Կառապետ եկեղեցին մեջ նղիշե արքեպիսկոպոս Դուրյանը, այն ատեն դեռ վարդապետ: Միշահասակեն քիչ մը վեր, խոշոր մագիդ զլուկով, կարճ մորուքով թիսահեր կտրիճ երիտասարդ մըն էր: Իր քարոզին մեջ եղանակավոր հոեսորական շեշտ մը դրմեր հա-

ճախ և հունական դիցաբանական անուններ չեն պակսեր շրթումքին տակ: Գրասերներ միշտ կախորժեին իր հմուտ քարոզներեն, իր այլարանական դարձվածքներեն և պատմական դրվագներեն և իր հատով անուններու մոխ, փոյտն պաշարեն: Տրված ըլլարով իր խոնարդ ծագումը, — երկաթագործի զավակ, — և նաև նախապես բաժին ինված տնանկովյան աղքաղկ կյանք մը իր ընդարձակ ուսման ծանր շրջանին, կզարմանայինը, թե ինչ մեծ հարատեսությամբ կրցած էր լուսացնել այնքան խոր հմտություն մը, գրաբար մատենագրություն աստվածաբանության հետ, լատիներեն, հունական և սփոլաստիկական, ինչպես նաև գերմանական, անգլական և ֆրանսական իմաստասիրությանց պատմությունները, և ասոնցմի զատ եվրոպական միջազգային գրականությանց պատմությունը՝ հայկական գրականության պատմության առնվթերը: Իր զուտ խառնվածքը գրական էր և ինքն ալ իր եղբորը պես կանուխեն սկսած էր գրել:

Աշխարհական անվամբ Միհրան՝ կրտսեցագումը շրու եղբայրներուն մեջ, ծնած է Սկյուտար 1860 փետրվար 23-ին: Նախակրթությունը ստանալե վերջ Սկյուտարի ծեմարանին մեջ, նույն հաստատության մեջ ուսուցչության վկոչվի 1876-ին: Երկու տարի վերջ հազիվ 18 տարեկան, սարկավագ կծեռնադրվի իղմիրլյան Մատթեոս եպիսկոպոսի ձեռքով Սկյուտարի Ս. Կարապետ եկեղեցիին մեջ: 1879 հունիս 1-ին կընդունի վարդապետության գավազանը: 1880—1890-ի շրջանին կմեկնի Պարտիզակ՝ քարոզչի և ուսուցչի պաշտոնով: 1889—1890-ին Եվրոպայի պատգամավոր կկոչվի Աշքայան Խորեն պատրիարքին կողմէ: Այս առթիվ Եղիշե վարդապետ Դուրյան այցելած է նաև Ռումանիա հայշատ կեղուններեն Թուքիշ, Ֆոկշան, Թուտուշան, նաև Սուչավա և այն ու անմոռա-

¹. Պետրոս Դուրյանի բանաստեղծ մտերիմը, իրեն նման վաղամեռիկ, սրբն գագաղին առջե սրտահուդ դամբանական մը խոսած է իր մեռնելին միան 7 ամիս առաջ ըսկով՝ «Միթք կթաղվի» ճառագալթը»:

նալի տպավորություն մըն է թուղած այդ քա-
ղաքներուն մեջ ապրող պանդուկսու հայորդի-
ներուն վրա: 1890—1904 թվականներուն
Արմաշի դպրեվանքին մեջ ուսուցիչ-տեսուչ
կընտրվի և հետո փոխ վանահայր-վերատե-
սուչ: 1898 հոկտեմբեր 25-ին եպիսկոպոս
կձեռնադրվի ձեռամբ Մկրտչի Խրիմյան կա-
թողիկոսի: Եղիշե Դուրյան հատկապես Ար-
մաշի դպրեվանքին մեծագույն ոգևորողը
հանդիսացավ: Հաստատության երկրորդ տա-
րիեն մկայալ գործակիցն էր Օրմանյանի, իբ-
րև ուսուցիչ հայերեն լեզվի, գրականության
և պատմության և ներքին տեսուչ: 1886 թվա-
կանին Օրմանյան Կոստանդնուպոլսուո պատ-
րիարք ընտրվելով, Արմաշի վերատեսչությու-
նը միայն և միայն Եղիշե Դուրյանին կարե-
լի էր վատահիլ: Իրավացի կերպով «Արմաշի
նոգին» կոչեցին զինքը, քանի որ Եղիշե
Դուրյան մինակը կտաներ Արմաշի մատա-
կարարի հոգը, հաշիվներու կարգադրությու-
նը, դպրեվանքին ու որբանոցին դասերը,
ժամանուր հսկողությունը և ալլն և ալլն:
Եթե 1904 թվականին Եղիշե Դուրյան Արմա-
շին Զմյուսնիա պիտի անցներ իբրև առաջ-
նորդ, Կիշեմ, թե ինչպես ամբողջ հայ մա-
մուկը, «Մասիս»ի գլխավորությամբ, արդար
աղմուկ բարձրացուց իր այս նոր պաշտոնին
կոչվելուն համար, անհապաղ կոչ ընելով,
որպեսզի Եղիշե Դուրյան շարումակե Արմա-
շի իր առաքելությունը: Բայց իրականին մեջ
Արմաշի մեջ իր 14 տարիներու ծանր աշ-
խատանքները, ծանրաբեռնված՝ մտավորա-
կան անդուկ աշխատության հոգնությունե-
րով, զորս ավելի սաստկացուցեր էին փոխ-
վանահայրական շրջանի վարչական և մա-
տակարարական հոգերն ալ, ազդած էին իր
մարմնական կազմին վրա, թիֆունի խոր-
հուրդ տված էին անհապաղ թողուկ իր ծան-
րաշխատ կրանքը: Այս պատճառով հար-
կադրված էր ժնդումիլ Զմյուսնիա առաջնոր-
դական պաշտոնը: Դեռ տարիներ հետո իսկ
Եղիշե Դուրյան չի մոռնար Արմաշը, ինքն էր,
որ 1913-ին կիանքնի Արմաշի ինամակալու-
թյան գրուստ, այդ ինամակալության օրոք է,
որ կիազմակերպվի 38 աշակերտների բաղ-
կացած նոր դասարան մը, որ 11-րդ դա-
սարանն էր Դպրեվանքին: Եղիշե Դուրյանի
14 ձեռնասուններին, որոնք նույն ատեն
բում իր աշակերտները եղան, պետք է հատ-
կապես հիշել հանգույցալ Մեսրոպ արքե-
պիսկոպոս Նարոյան, որ հետո Կոստանդ-
նուպոլս հայոց պատրիարք եղավ, Կոս-
տանդնուպոլսուն ներկա պատրիարք Գարեգին
արքեպիսկոպոս Խաչատուրյան, Ամերիկահայ
թեմի առաջնորդ նահատակ Ղևոնդ արքե-
պիսկոպոս Դուրյան, Բուզարիայի առաջնորդ
հանդուցյալ Երվանդ արքեպիսկոպոս Փեր-

տահճյան, Ելուոպայի նվիրակ հանգույցյալ
Գրիգորիս եպիսկոպոս Պալաքյան, հանգուց-
յալ Շահե արքեպիսկոպոս Գասպարյան,
1915-ին նահատակված առաջնորդներ՝ բա-
նաստեղ Արտավազդ ծայրագույն վարդա-
պես Գալանտերյան (Եղիսիա), Սահակ վար-
դապետ Օտապաշյան (Երզնկա), Շավարշ
վարդապետ Սահակյան (Եղիոկիա), Պասկ
վարդապետ Տեր Խորենյան (Խարբերդ) բա-
նասերը, որ Խորդյան գավառի հինգ հատոր-
ների բաղկացյալ ընդարձակ աշխատություն
մըն էր գրեր և կարծեմ անտիպ ալ մնաց
ցարդ, և ուրիշներ: Մեծ է եղած Դուրյանի
աղղեցությունը իր աշակերտներուն վրա: Իր
սաներեն և ձեռնասուններեն Պարգև ծայրա-
գույն վարդապետ Դանիելյան, Կոտինայի
հայոց առաջնորդը, Արմաշը Դպրեվանքին
25-ամյա Հորելյանին առթիվ հրատարակված
հատորին մեջ երկրուղածորեն հետևյալ տո-
ղերը կնվիրեր իր մեծ ուսուցչին.

«Եր դասախոսություններն ու բարոյա-
խոսությունները ունեին այնպիսի դյութիչ
հաճուքը մը, որով ամենքս ալ թովված
էինք պարզապես: Ինքը մեզի համար ու-
սուցիչ մը կամ վարդապետ մը չեր տուի,
այլ բառին բում նշանակությամբ քաղցր և
հեղաճամբուր հոգեւոր հայր մը, որուն
ներկայությունը պատկառանք կազդեր ա-
մենուս, իր մենք նայվածքն իսկ բավական
էր, որ մենք բոպեական կերպով ամփոփ-
վեինք ու խորին հիացուամով ունկնդրեինք
զինքը: Իր հանդիմանություններն իսկ, եթե
ի հարկին կըլլային մեզի, կարծես թե բա-
րոյախոսության դասեր էին, արտասան-
ված գորովագով Հոր մը և Ճշմարիտ վար-
դապետի մը գերենեն, որմեծ կախված կմը-
նայինք բոլորովին ազդված ու խրատ-
ված: Ինքը Դպրեվանքի համար եղավ Ս.
Մեսրոպի նման բառին իսկական առու-
մով մեծ վարդապետ մը, ու ոնեցավ իր
աշակերտներեն հասուցած վարդապետներ,
որոնք զինքը (զԴուրյան սրբազան) պաշ-
տելու չափ կարեն ու կհարգեն: Դպրե-
վանքի բոլոր աշակերտներն, եկեղեցական
ու աշխարհական, իրենց ընդունած դաս-
տիարակության և ուսման մեծագույն մա-
սը կպարտին Դուրյան սրբազանին, որ
շուրջ 15 տարիներ ծառայեց այդ հատու-
տության իբր տեսուչ և վանահայր, ունե-
նալով իր աշակերտներին լավագույն օգ-
նականները:

1904—1908-ին Եղիշե Դուրյան կվարե-
կմյուսնիու առաջնորդությունը: 1908 հունիս

1. «Արմաշը Դպրեվանքին 25-ամյա յորելյանին
առթիվ», 1889—1914, Կ. Պոլիս, 1914 թ., էջ 239.

16-ին՝ տեղապահ՝ Պատրիարքության Կոստանդնուպոլսո, նույն ժամանակ գլխավոր ղեկավարը Հանդիսանալով հայ Եկեղեցվորարեկարգման գործին: 1909 մայիս 2-ին 1910 դեկտեմբեր՝ պատրիարք Կոստանդնու-

պոս Դուռըան միայն 1 ձայն պակաս կստանա Գեորգ արքեպիսկոպոս Սուրբնյանցեն (Հետո՝ Գեորգ Ե.):

1921 Հունիսին կայցելի Երուսաղեմ, ուր սեպտեմբեր 5-ին կընտրվի պատրիարք Ե-



Եղիշե արքեպիսկոպոս Դուռըան, պատրիարք Երուսաղեմի

պոլսու: 1911—1921 Կոստանդնուպոլիս, քառորդիչ, ուսուցիչ և ատենապետ Ազգային կեդրոնական վարչության և Կրոնական ժողովին: 1911-ին էջմիածնի կաթողիկոսական ընտրության ժամանակ Եղիշե արքեպիսկո-

րուսաղեմի Առաքելական Ս. Աթոռույն: Երուսաղեմի պատրիարքության պաշտոնին առաջին օրին՝ իր բոլոր ջանքք կթափե Ժառանգավորաց վարժարանի քարեկարգության և Հառաջդիմության համար: Իր շնորհիվ խա-

ղաղ մթնոլորտ մը ստեղծվեցավ վանքին մեջ, միաբանական գործունեությունը անխափան շարունակվեցավ, տուր տեղյաց միջազգային հարաբերությունները խաղաղությամբ կատարվեցան, իր օրով հաստատվեցան Կյուպենիկյան և Մելքոնյան սանուց ընծայարանները, որոնց ինչպիս նաև ժառանգավորաց վարժարանին անձամբ կդասախոսե: Առաջին անգամ ըլլալով, որոշմամբ Տնտեսական ժողովը, կարգադրած է, որ 1928—1930 շրջանին համար վերսկսի «ԱՄԻՆ» ամսագրի հրատակությունը, որուն ինքն ալ կաշխատակցի բանափառական, կրոնական և այլ հողածներով: Ընծայացումներու և միաբանության զարգացման համար դարակներու մեջ ամբարած է հազարավոր հաստորներ, որ զետեղված պիտի ըլլային իր հորելյանին առթիվ նոր շինված մատենադարանին մեջ: Եղիշե պատրիարք ունի նաև հրատարակություններ, որոնք են: «Թառագիտություն կամ ուժ մասունք բանի հայերեն քերականության», տպագրված 5 անդամ 1886—1933, «Հնագույն ի գորոց բարբառու, 9 անգամ տպադրված 1880—1947, նույնի թ տարին 3 անդամ տպագրված 1883—1928, նույնի Գ տարին 2 անգամ տպագրված 1929—1930, «Հնագույն ասացվածք» 1882, «Հովվական սրինգ» 1909, «Պատմություն հայ մատենագրության» 1885, «Դրվագներ մասունք Հիսուսի կյանքին» 1926 և 1950 և այլն:

Բացի գրական և կրթական գործունեություններ, Եղիշե սրբազն պատրիարքը նորոգել տված է Ս. Հակոբա վանքին կալվածները, մանավանդ այն շենքերը, որ 1927-ի երկրաշարժեն ավելի կամ նվազ վնասված էին: Այսպիս իր հիմունքով կառուցվեցավ նաև երկրաշարժեն քայլայված Ազգային նախակրթարանի և մանկապարտեղի շենքը: Հետզհետե նորոգել տված թեթեղենմի, Ռամզիի, Հոպագեի վանքերը և կալվածները: Ս. Հակոբի վանքի թեմերուն կրթական գործերուն հոգատարությունը կատարելով հանդերձ, Հայֆայի մեջ Խեղեցիի և վարժարանի համար գետին մշտ գնելու նախաձեռնարկ եղած է: Վեհաշենի (Հարություն պատրիարքի կալվածը) վրա երկու հարկ և մեկ թե ևս ավելցնել տված է: Եղիշե սրբազն իր մասնավոր ուշադրության առարկա ըրած էր նաև հիմանդ, ծերեւ տկար միաբաններուն մտունդի պարագան, ասոր համար Պատրիարքարանի պարտեզին մոտ քարովիր կովտուն մը շինել տված է, ուր առաջին անգամ բարե-

1. Եղիշե Դուրյան սրբազնի ինչ-ինչ հենագրական և գործունեական տեղեկությունները մտամբ քաղաք մը ժանոթ բանակը Հ. Մ. Պոտուրյանի «Հայ հանրագիտական» (կիսավարտ), էջ 631—633, տպ. Բուքրեց:

պաշտ նվիրատուների գնված կովերու թիվը քառապատկված է այսօր: 1928 տարվան կիսում վերաշնել տված է Պարոնտեր կոչված վանուց այդի ամառանոցը, զնելով զայն վայելու վիճակի մը մեց:

Եղիշե սրբազն պատրիարքի բահանայության հիմանացյա հորելյանը կատարվեցավ մեծ հանդիսությամբ 1929 հոկտեմբերին թարգմանչաց տոնին, ամսությ 25-ին մինչև 28 երկուշաբթի: Այդ առթիվ հրատարակեցավ «Ամելայի մեջ նոտար ստորագրությամբ թորգոմ արքեպիհակոպու Գուշակյանին հողածաշարը մը Դուրյան սրբազն պատրիարքի կանքը տառմասարող, Բարգեն եպիսկոպոս (ապա Աթոռակից-Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո) հորելյարին կենսագրությունը հրատարակեց Նյու-Յորքի «Կոչնակի» տպարաններ: «Փարու», «Պալքար» (Ամերիկա), «Հայ խոսնակ», «Դիտակ» բացառիկ թիվեր հրատարակեցին և անխորի բոլոր պարբերաթիվերը հոգվածներ նվիրեցին արա հանդիսավոր հորելյանին առթիվ: Մեր ժողովուրդը տոնելով այս հորելյանը, ցույց տվավ, որ միայն հատ մահու չէ որ գիտե հարգել իր մեծ զավակներուն արժանիքները: Գրի ու գրի հոյակապ վարպետը, ներշուն բանակներու ու քերթողը, սաուցշապետը՝ հոգերան և իմաստասեր, հոետորը՝ պերճախոս և հոգեգումը, վարչական մեծ գործիչը, և վերջապես սիազար ու առաքինի մարդին էր Եղիշե արքեպիհակոպու Դուրյան:

Հորելյարի առաջարկությամբ հորելյանի առթիվ եղած նվիրատությամբ Դուրյան մատենադարանը կիսնագնակ երտարադիմի Ս. Հակոբյանց վանքին մեջ և միանվամայն այդ անսանով բանասիրական գործեր կհրատարակին: Առաջին գիրքը, որ լույս տեսավ «Դուրյան մատենադարան» տիտղոսին տակ էր Եղիշե Պատրիարքը Դուրյան (իր քահանական հիմանացյակին առթիվ), և մահնետք, որ տեղի տնեցավ 1930 ապրիլին, «Դուրյան մատենադարան» սկզբնական թիվերուն մեջ Դուրյան սրբազնի գործերը հրատարակեցան, նաև «Պատմություն հայ մատենագրության» 1933 (463 էջ), «Հայոց հին կոռնը կամ հայեական գիշարանությունը 1933 (159 էջ), «Ազգային պատմություն» 1934 (478 էջ), էմիլ Բուարագի «Համառոտ պատմություն փիլիսոփայության», թարգմանություն ֆրանսերենի 1934 (Ժ+187 էջ), «Դասական մատենագրություն» 1935 (81 էջ), միասունամասիրությունը և քննադատությունը 1935 (Ժ+575 էջ), «Կրոններու պատմություն» 1935 (Ժ+422 էջ), «Բարոյագիտություն» 1936 (114 էջ), «Սրբազն քնար» (իր բոլոր բանաստեղծությանց հավաքածուն) 1936 (ԻԱ+575 էջ) և այլն:

Եղիշե արքեպիսկոպոս՝ Դուռյանի Արմաշի աշակերտներին բացի, Երուաղեմի աշակերտներին շատերը այսօր իր ջնորհի Ամերիկայի, Սյուրիս և Ելրոպայի հայ գաղութներում մեջ հայ ազգային ոգին և հայ ավանդությունները կպահպանեն, Մայր Հայութիքին կապը ամուր կպահն և կշանան նոր սերունդին մեջ արժարծել շարունակ հարգանքը Սովետական Հայաստանին և Մայր Աթոռին հանդեպ:

Որքան ալ որ իր քարոզները մեծ մասամբ ժողովորդին համենալի լեզու մը չտահեն, Եղիշե Դուռյան կարծես գգալով այդ պահապությունը, ուզած է մերթ ժողովորդականության, ժողովորդին հոգերը արտահայտող մարմազ մը ցուց տալ, և ատոր համար է, որ գրաբար բնագրեն մարտոր, հավատարիմ աշխարհաբարի վերածած է «Այսօր անձառը, «Տարածեալը, «Նորաստեղծեալը, ոնայեաց սիրովլ և այլն, խիստ հաջող կերպով պահելով միշտ բնագրին տաղաշափական կշռութը և հանգիրը: Երբ շնորհավորեցի դինքը ատոր համար, միևնույն ատեն դիտել տալով, թե ինչո՞ւ գեթ իր նախագահած եկեղեցական արարողությանց պահուն այդ աշխարհաբար շարականները երգել չեւ տար փոխանակ գրաբարին, պատասխանեց ինձ, թե իր կողմէ հավանություն մը պիտի րջար այդ բանը և թե ատոր արտոնությունը պետք է տրված ըլլար միայն Մայր Յիթունն: Հայ գատին ու հայ գրականության սիրահար, իր գրած աշխարհաբար ցանուցրիվ մի քանի արձակ գրությանց մեջ շատ հուզէլ և միշտ նախընտրելի գտած եմ, հայ տառերու գուտաին 1500-ամրակի առթիվ, Մեսրոպ Մաշտոցի ուղղած խոսքերը, ուր հոգին մանկացած և ծնրադիր անոր Օշականի կերպմանին առջև, կրացագանչեալ ամրագիտ, աղվոր այբ-բեն-դիմեղ դաս մը տուր ինձի:

Եղիշե սրբազն Դուռյան մեր կղերականության մեջ ամենեն բեղուն գրիշը եղած է, ամենեն ինքնատիպ, և ելքուպական դրագետի պատկառելի համբավին հավասար: Հակառակ իր վարշական ծանր պաշտոններուն, իր մենության թանկագին ժամերուն մեջ, հազարավոր էշեր լիցուցած է իր քազմահմտությունը անխոնց պրատուններով, և որովհետև չեւ լրցած ամենքը իրենց ատենին ի լույս ընծայել, քանիքարաքույց կոչած են զինքը անիրավաբար: Ու որքան տեղին էին իր խոսքերը, երբ իր հոբելանին առթիվ Եղիշե Դուռյան իր պատասխան քարոզին մեջ սապես կարտահայտվեր, «Ինձի քանքարաթագույց կըսեն, բայց պետք է դիտին ու ասիկա քանքարաթագույցի անհամար ինձի, ինչ որ ու-

նիմ, ինչ որ գիտեմ և ինչ որ ալ սորվիմ ամեն օր՝ իր տոկոսներով կուտամ ևս զայն հայ ժողովուրդին: Հիսուն տարի քարոզեր եմ եկեղեցվուն բեմեն, հիսուն տարի շարունակ դասախոսեր մեր դարուցներուն մեջ, զարմանալի բան չէ՝ որ ասիկա քանքարաթագույցի գործ նկատմամբ:

Դեռ շատ կանուգ, 1908-ին Կոստանդնուպոլատի Ա. Անտոնյանի կողմէ խմբագրված ձևույս հանգիսին մեջ, Պատրոս Դուռյանին մասին գրած երկար ուսումնասիրությանս մեջ ճիշտ կերպով նկատեր էի, որ Պետրոս Դուռյանի կյանքը իր գործերով շարունակվեցավ իր կրտսեր եղբոր՝ Եղիշե Դուռյանի մեջ, անոր ընդունակությունները նկատի առնելով էր, որ Ալյուստարի Սուխակը իր հոգեվարքին մեջ կտակ մը ըրած էր իրեններուն ըսելով. «Ավագ նայեցեք Միհրանին» (այսինքն Եղիշե Դուռյանին) և ճշմարիտ, որ չէր սիսալած: Եղիշե Դուռյանի բանաստեղծությունները գոմագեղ են, պայծառ, խորհուրդը պատկերավի ընող լուսավոր հատակի մը փրա, մարմարի սյունի մը պես հատու, կը Քոնդ դը կիլի վերլուծական հարթ պատճերով, որ խորհուրդը տեսանելի կընե: Արագես է «Հորդանանեն դեպի Մեռեալ ծով» երկար բանաստեղծությունը, որմէ ահա՛ մի քանի տողեր.

«Թե կյանքի սերն ոմնիս դուն՝
Մի վարանիր, Ֆկուր դիտել կյանքը բոն
Այն ջուրերու ալմլկոր ծոցին մոտ,
Ուր կա իմաստ մանծանոթ:

«...Կերթան ափունքն արն հեռու՝
Աղի, կուպրի հետ գիրկընուիսառն օրինու,
Ու խարանված հին պատիժեն Սուլումին՝
Ծծումբի հոս կըրտնին:

«...Տես, շունչ՝ շարժում կոգելորեն ծովն
Աղտից,
Կծաղկի դեմքն անոր՝ ժպիտ մալ անոփիծ,
Ու ծփանքներն համբուլություն տարփածին
Կծեն շուրթն ավազին:

«...Ան որ երբեմն աղի արձանը կեռուից՝
Իբր «Հիշատակը անհավատ հոգինին՝
Որշա՞փ անհեղծ պիտի պահ զձեղ ինքնին,
Ու վ հավատքի հոգիներ մեծա:

Եղիշե Դուռյանի գրական երկասիրություններեն շատերը դասագրեր են միենուն ատեն և կարող են երկար տարիներ մեռ դպրոցական սերունդներուն մեջ առձադանցել իբրի ազգային ճանաշողության շինի ոգի:

1. «Միոն», 1929, № 11—12—13:

Իր կյանքին վերջին ամիսներում, երիկամութիւնը վիրաբուժական գործողութենէ մը վերջ, Երուաղեմի անգլիական իշխանության կողմէ թիկնապահ մը կղթվեր ստեղ իր մոտ իր որպիսությունը հարցնելու համար։ Եղիշի Դուրյանի հեղինակավոր և բանիքուն միտքն ու խոսակցությունը անշոշտ շատ հարգված էր եփուպական դիվանագիտավան և Կոռոնական մարմիններուն կողմն։ Դյուքին է քաղաքական ավելի կամ նվազ խաղաղ պայմաններու մեջ բարձրարժեք եկեղեցականի մը որպիսությունը հարցնել, բայց անգամ մը հարցուցի՞ն 1915-ի հայկական աննախընթաց անլուր աքսորի ատեն, թե ի՞նչ եղան, ի՞նչպես սպանվեցան ճամբուն վրա Կեսարիո առաջնորդ Խոսրով Խպիսկոպոս Պեհրիկ-

յան, Կարնո առաջնորդ Սմբատ եպիսկոպոս Սամահթյան, Դիարբեկիրի (Տիգրանակերտ) տեղապահ Մկրտիչ ծալրագույն վարդապետ Ջղատյան, Եղողիկո առաջնորդ Եավարշ վարդապետ Սահակյան, Խարբերդի առաջնորդ Պատկ վարդապետ Տեր Խորենյան, Երգընկայի առաջնորդ Սահակ եպիսկոպոս Օտապաշյան, Եղիսիր առաջնորդ Արտավազդ վարդապետ Գալենտերյան, Բաղեշի առաջնորդ Սուրեն եպիսկոպոս Գալեմյան, Քղիի առաջնորդ Գեղամ վարդապետ Բներքելյան, Սամաոն-Ճանիկի առաջնորդ Համազասպ վարդապետ Եղիսեյան և այլն և այլն, առանց խոսքը ընելու դեռ մեկ ու կիս միլիոն նահատակ հայության։

